Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-163-10.02.2022-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» 2014 թվականի փետրվարի 4-ի ՀՕ-1-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-6-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 2. Պետական պաշտոն զբաղեցրած անձին կենսաթոշակ նշանակելու պայմանները

1. Սույն օրենքով կենսաթոշակի իրավունք ունի՝

1) Սահմանադրական դատարանի դատավորը՝

ա. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով լիազորությունների դադարման դեպքում՝ անկախ տարիքից, կամ

բ. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով կամ 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հիմքերով, կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով լիազորությունների դադարման կամ դադարեցման դեպքերում,

2) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնը զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

3) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոն զբաղեցրած կամ հինգ տարի Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավորի պաշտոն զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

4) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հաշվեքննիչ պալատի անդամի կամ առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկիչ պալատի նախագահի կամ վեց տարի Ազգային ժողովի վերահսկիչ պալատի նախագահի պաշտոն զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

5) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոն զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

6) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ գլխավոր դատախազի պաշտոն զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

7) առնվազն մեկ ժամկետ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

8) դատավորի պաշտոնում առնվազն 10 օրացուցային տարի պաշտոնավարած անձը, որի լիազորությունները դադարեցվել կամ դադարել են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու կամ դատավորի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու հիմքերով.

9) դատախազի պաշտոն զբաղեցրած անձը, որը՝

ա. պաշտոնից ազատվելու (լիազորությունները դադարեցվելու կամ դադարելու) օրվա դրությամբ ունի առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական ստաժ, կամ

բ. պաշտոնից ազատվել (լիազորությունները դադարեցվել կամ դադարել) է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու կամ դատախազի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու հիմքերով.

10) հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձը, որը՝

ա. պաշտոնից ազատվելու (լիազորությունները դադարեցվելու կամ դադարելու) օրվա դրությամբ ունի առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական ստաժ, կամ

բ. պաշտոնից ազատվել (լիազորությունները դադարեցվել կամ դադարել) է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 4-րդ մասի 1-ին կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով.

11) քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձը, որը՝

ա. պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ ունի առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական ստաժ, կամ

բ. պաշտոնից ազատվել է «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով.

12) պետական եկամուտների կոմիտեի քննչական մարմնում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձը, որը՝

ա. պաշտոնից ազատվել է «Հարկային ծառայության մասին» օրենքի 25.1-ին հոդվածի 1-ին 1-3-րդ մասերով, 26-րդ հոդվածի 1-3-րդ մասերով նախատեսված հիմքերից որևէ մեկով և պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ ունի առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական ստաժ, կամ

բ. պաշտոնից ազատվել է «Հարկային ծառայության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով նախատեսված հիմքով կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով.

13) սույն օրենքի N 1 հավելվածով սահմանված պաշտոններում, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարի պաշտոնում առնվազն 10 օրացուցային տարի պաշտոնավարած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

14) Հանրապետության նախագահը, Ազգային ժողովի պատգամավորը, Կառավարության անդամը, Սահմանադրական դատարանի և այլ դատարանների դատավորը, Բարձրագույն դատական խորհրդի անդամը, Մարդու իրավունքների պաշտպանը, Հաշվեքննիչ պալատի նախագահը, դատախազը, հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն, քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն, պետական եկամուտների կոմիտեի քննչական մարմնում ինքնավար պաշտոն

զբաղեցրած անձը՝ իր պաշտոնեական պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առնչությամբ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչվելու դեպքում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված մեկից ավելի հիմքերով միաժամանակ կենսաթոշակի իրավունք ձեռք բերած անձին կենսաթոշակ նշանակվում է այդ հիմքերից մեկով՝ իր ընտրությամբ:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 14-րդ կետում նշված դեպքում պետական պաշտոն զբաղեցրած անձը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բժշկական կազմակերպություններում ապահովվում է բժշկական սպասարկմամբ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

4. Սույն օրենքով սահմանված պայմանները բավարարելու դեպքում պետական պաշտոն զբաղեցրած անձը սույն օրենքով կենսաթոշակի իրավունք ունի, եթե չի զբաղեցնում հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն: Սույն օրենքի իմաստով հանրային պաշտոն է համարվում նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի դատավորի պաշտոնը:

5. Սույն օրենքով սահմանված պայմանները բավարարելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացին, Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին: Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին կենսաթոշակի իրավունք ունի Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեում հաշվառված լինելու ժամանակահատվածում:

6. Պետական պաշտոն զբաղեցրած անձը չունի սույն օրենքով կենսաթոշակի իրավունք, եթե պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ կամ դրանից հետո օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար, որը կատարել է պաշտոնավարման ընթացքում:»:

Հոդված 3. Պետական պաշտոն զբաղեցրած անձի ընտանիքի անդամների սոցիալական երաշխիքները պետական պաշտոն զբաղեցրած անձի մահանալու (զոհվելու) դեպքում

1. Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի պատգամավորի, Կառավարության անդամի, Սահմանադրական դատարանի և այլ դատարանների դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, Մարդու իրավունքների պաշտպանի, Հաշվեքննիչ պալատի նախագահի, դատախազի, հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն, քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն, պետական եկամուտների կոմիտեի քննչական մարմնում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձի կողմից իր պաշտոնեական պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առնչությամբ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով մահանալու (զոհվելու) դեպքում, սույն մասում նշված անձի՝

1) հուղարկավորությունը կազմակերպած անձին վճարվում է հուղարկավորության նպաստ,

2) ընտանիքին տրվում է միանվագ դրամական օգնություն,

3) ընտանիքի անդամներից մեկին՝ ընտանիքի համար նշանակվում է կենսաթոշակ: Ընտանիքի անդամներից մեկի պահանջով նրա բաժնեմասը Կառավարության սահմանած կարգով նշանակվում և վճարվում է առանձին՝ հաշվարկվելով համամասնորեն:

2. Սույն օրենքի իմաստով մահացած (զոհված) պետական պաշտոն զբաղեցրած անձի ընտանիքի անդամ են համարվում սույն հոդվածի 1-ին մասում նշված անձի՝

1) ծնողները, ամուսինը, եթե չեն աշխատում և մահվան օրվա դրությամբ՝

ա. լրացել է նրանց տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը, կամ

բ. ճանաչված են եղել հաշմանդամություն ունեցող անձ.

2) 18 տարին չլրացած երեխան (ուսումնական հաստատությունում առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորելու դեպքում՝ մինչև ուսումնական հաստատությունն ավարտելը, բայց մինչև իր 26 տարին լրանալը).

3) 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ զավակը, եթե նա հաշմանդամ է ճանաչվել մինչև իր 18 տարին լրանալը և ունի աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում,

4) ամուսինը կամ սույն հոդվածի 1-ին մասում նշված անձի երեխայի օրենքով սահմանված կարգով խնամակալ ճանաչված անձը՝ անկախ տարիքից, եթե նա զբաղված է սույն հոդվածի 1-ին մասում նշված անձի 14 տարին չլրացած երեխայի խնամքով, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում

առկա տվյալների՝ նրա հետ հաշվառված է նույն բնակության վայրում (հասցեում) և չի աշխատում:

3. Միանվագ դրամական օգնություն, հուղարկավորության նպաստ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, նշանակելու և վճարելու կարգը, հուղարկավորության նպաստի չափը, միանվագ դրամական օգնության չափը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 4. Կենսաթոշակի ընտրության իրավունքը

1. Սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով միաժամանակ պետական կենսաթոշակների իրավունք ունեցող անձին նշանակվում է մեկ կենսաթոշակ՝ իր ընտրությամբ:

2. Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով պետական կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարում է անձին սույն օրենքով կենսաթոշակ նշանակելու օրվանից, իսկ այդ օրվանից հետո վճարված այլ կենսաթոշակի գումարը պահվում (հաշվանցվում) է սույն օրենքով նշանակված կենսաթոշակի գումարից:

Հոդված 5. Պետական պաշտոն զբաղեցրած անձի և նրա ընտանիքի անդամների կենսաթոշակը հաշվարկելու (վերահաշվարկելու) կարգը

1. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 13-րդ և 14-րդ կետերում նշված պաշտոններ զբաղեցրած անձին, սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված դեպքում՝ նրա ընտանիքին նշանակվող կենսաթոշակի չափը հաշվարկվում է՝

Կ=Հ x Գ + ԿՀՍ x ԿՀՍԱ - ԿԿ բանաձևով, որտեղ՝

Կ-ն՝ կենսաթոշակի ամսական գումարն է,

Հ-ն՝ սույն օրենքով կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող հիմնական կենսաթոշակի չափը (այսուհետ՝ հիմնական կենսաթոշակ),

Գ-ն՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով անձի զբաղեցրած պաշտոնների համար սահմանված առավելագույն գործակիցը (այսուհետ՝ գործակից),

ԿՀՍ-ն՝ կենսաթոշակը հաշվարկելու համար ստաժը՝ սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում նշված այն պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածը (պաշտոններ զբաղեցնելու ժամանակահատվածների հանրագումարը).

ԿՀՍԱ-ն՝ կենսաթոշակը հաշվարկելու համար ստաժի մեկ տարվա արժեքը (այսուհետ՝ մեկ տարվա արժեք),

ԿԿ՝ անուիտետի կամ ծրագրային վճարների ձևով վճարվող կուտակային կենսաթոշակի՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով տվյալ պաշտոն զբաղեցրած անձի համար (օգտին) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված լրացուցիչ միջոցներից ձևավորված ամսական չափը (այսուհետ՝ կուտակային կենսաթոշակի՝ պետական բյուջեի հատկացումներից ձևավորված չափ):

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հաշվարկված կենսաթոշակի չափը վերահաշվարկվում է հիմնական կենսաթոշակի չափը, ստաժի մեկ տարվա արժեքը փոխվելու դեպքում:

3. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 5-րդ, 7-րդ և 8-րդ կետերում նշված պաշտոններ զբաղեցրած անձին կամ սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված դեպքում նրա ընտանիքին նշանակվող կենսաթոշակի չափը հաշվարկվում է.

1) զբաղեցրած վերջին պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ այդ պաշտոնի համար «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված պաշտոնային դրույքաչափի ու հավելավճարի հանրագումարի 55 տոկոսի չափով, եթե տվյալ պաշտոն զբաղեցրած անձը կուտակային բաղադրիչի մասնակից չէ կամ կուտակային բաղադրիչի մասնակից է, սակայն նրա համար առկա չէ կուտակային կենսաթոշակի՝ պետական բյուջեի հատկացումներից ձևավորված չափ,

2) զբաղեցրած վերջին պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ այդ պաշտոնի համար «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված պաշտոնային դրույքաչափի ու հավելավճարի հանրագումարի 55 տոկոսի և նրան վճարվող կուտակային կենսաթոշակի՝ պետական բյուջեի հատկացումներից ձևավորված չափի տարբերության չափով, եթե տվյալ պաշտոն զբաղեցրած անձը կուտակային բաղադրիչի մասնակից է և

նրա համար առկա է կուտակային կենսաթոշակի՝ պետական բյուջեի հատկացումներից ձևավորված չափ:

4. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ, 9-12-րդ կետում նշված պաշտոններ զբաղեցրած անձին կամ սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված դեպքում նրա ընտանիքին նշանակվող կենսաթոշակի չափը հաշվարկվում է.

1) զբաղեցրած վերջին պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ այդ պաշտոնի համար «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված պաշտոնային դրույքաչափի ու հավելավճարի հանրագումարի 50 տոկոսի չափով, եթե տվյալ պաշտոն զբաղեցրած անձը կուտակային բաղադրիչի մասնակից չէ կամ կուտակային բաղադրիչի մասնակից է, սակայն նրա համար առկա չէ կուտակային կենսաթոշակի՝ պետական բյուջեի հատկացումներից ձևավորված չափ:

2) զբաղեցրած վերջին պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ այդ պաշտոնի համար «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված պաշտոնային դրույքաչափի ու հավելավճարի հանրագումարի 50 տոկոսի և նրան վճարվող կուտակային կենսաթոշակի՝ պետական բյուջեի հատկացումներից ձևավորված չափի տարբերության չափով, եթե տվյալ պաշտոն զբաղեցրած անձը կուտակային բաղադրիչի մասնակից է և նրա համար առկա է կուտակային կենսաթոշակի՝ պետական բյուջեի հատկացումներից ձևավորված չափ:

5. Սույն հոդվածով հաշվարկված կենսաթոշակի չափը չի կարող գերազանցել այն պաշտոնային դրույքաչափի 92 տոկոսը, որից հաշվարկվել է կենսաթոշակը:

6. Սույն հոդվածով հաշվարկված կենսաթոշակի չափը վերահաշվարկվում է.

1) սույն օրենքով կենսաթոշակը նշանակելուց հետո անուիտետի կամ ծրագրային վճարների ձևով վճարվող կուտակային կենսաթոշակ նշանակելու դեպքում,

2) նշանակված կուտակային կենսաթոշակի՝ պետական բյուջեի հատկացումներից ձևավորված չափը փոփոխվելու կամ ծրագրային վճարների ձևով վճարվող կուտակային կենսաթոշակը դադարելու դեպքում:

7. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում նշված պաշտոն զբաղեցրած անձի կենսաթոշակի չափը հաշվարկելիս պաշտոնային դրույքաչափը ու հավելավճարը հաշվարկվում են «Պետական պաշտոններ և պետական ծառայության

պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված կարգով՝ հիմք ընդունելով պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ նրա՝ դատավորի պաշտոնում աշխատանքային ստաժի տևողությունը և «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով Վճռաբեկ դատարանի դատավորի համար սահմանված գործակիցը:

8. Սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն կենսաթոշակի չափը վերահաշվարկվում է այդ մասում նշված հանգամանքն առաջանալու ամսին հաջորդող ամսվա 1-ից: Կենսաթոշակի չափը վերահաշվարկելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքով սահմանված մասնակիցների ռեեստրը վարողը կենսաթոշակ նշանակող մարմնին տրամադրում է Կառավարության սահմանած կարգով:

9. Սույն օրենքով նշանակված կենսաթոշակի չափը վերահաշվարկվում է նաև կենսաթոշակառուի ներկայացրած գրավոր դիմումի և սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում նշված պաշտոն զբաղեցնելու վերաբերյալ լրացուցիչ փաստաթղթի հիման վրա՝ դիմելու ամսին հաջորդող ամսվա 1-ից՝ Կառավարության սահմանած կարգով: Եթե սույն մասով վերահաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է նախկին չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով:

10. Սույն հոդվածի 1-ին մասում նշված՝ կենսաթոշակի չափը հաշվարկելու համար ստաժը (ստաժում հաշվառվող ժամանակահատվածները), հիմնական կենսաթոշակի չափը, ստաժի մեկ տարվա արժեքը և սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-12-րդ կետերում նշված մասնագիտական ստաժը (մասնագիտական ստաժում հաշվառվող ժամանակահատվածները) հաշվարկելու կարգը սահմանում է Կառավարությունը:

11. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-12-րդ կետերում նշված մասնագիտական ստաժում և 13-րդ կետում նշված 10 օրացուցային տարում, սույն հոդվածի 1-ին մասում նշված՝ կենսաթոշակի չափը հաշվարկելու համար ստաժում կադրերի ռեզերվում գտնվելու ժամանակահատվածը չի հաշվառվում:

Հոդված 6. Պետական պաշտոն զբաղեցրած անձի, նրա ընտանիքի անդամների կենսաթոշակ ստանալու իրավունքը

1. Սույն օրենքով կենսաթոշակի իրավունք ունեցող անձը կենսաթոշակ ստանալու իրավունք ունի, եթե օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել է կենսաթոշակ նշանակող մարմին, և նրան նշանակվել է կենսաթոշակ:

2. Կենսաթոշակը նշանակվում է՝

1) սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 8-12-րդ կետերում նշված պաշտոնից ազատվելու (լիազորությունները դադարելու կամ դադարեցվելու) օրվանից, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են այդ օրվանից հետո՝ 6 ամսվա ընթացքում.

2) սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ և 13-րդ կետերում նշված պետական պաշտոն զբաղեցրած անձի՝ 65 տարին լրանալու օրվանից, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են այդ օրվանից հետո՝ 6 ամսվա ընթացքում.

3) սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետերում նշված պետական պաշտոն զբաղեցրած անձի՝ հաշմանդամ ճանաչվելու օրվանից, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են այդ օրվանից հետո՝ 6 ամսվա ընթացքում.

4) սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում նշված պետական պաշտոն զբաղեցրած անձի մահվան գրանցման օրվանից, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են այդ օրվանից հետո՝ 6 ամսվա ընթացքում.

5) դիմելու օրվանից, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են սույն մասի 1-4-րդ կետերով սահմանված 6-ամսյա ժամկետը լրանալուց հետո:

3. Սույն օրենքով կենսաթոշակը նշանակվում է ոչ ավելի վաղ, քան կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու օրվանից:

4. Սույն օրենքով կենսաթոշակը նշանակվում և վճարվում է, կենսաթոշակը վճարելը դադարեցվում և վերսկսվում է, կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում և վերականգնվում է, չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է, կենսաթոշակից պահումները կատարվում են, ավել վճարված կենսաթոշակի գումարները բռնագանձվում, հետ գանձվում և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերականգնվում են «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով սահմանված կարգով, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

5. Պետական պաշտոն զբաղեցրած անձի՝ սույն օրենքով նշանակված կենսաթոշակ ստանալու իրավունքը չի կարող դադարեցվել այլ աշխատանք կատարելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձը զբաղեցնում է հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն:

6. Հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու հիմքով կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցված լինելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվում է այդ պաշտոնից ազատվելուց հետո մեկ ամսվա ընթացքում գրավոր դիմելու և անհրաժեշտ փաստաթուղթ ներկայացնելու դեպքում՝ ազատվելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից, իսկ այդ ժամկետը լրանալուց հետո դիմելու դեպքում՝ գրավոր դիմելու և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Այս դեպքում կենսաթոշակը վերահաշվարկվում է այն հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցրած անձի կենսաթոշակը հաշվարկելու՝ սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով, որից ազատվելու հիմքով վերականգնվում է անձի կենսաթոշակ ստանալու իրավունքը: Եթե վերահաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է նախկին չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով:

7. Սույն օրենքով կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, կենսաթոշակ նշանակող մարմինը, կենսաթոշակ նշանակելու և վճարելու կարգը սահմանում է Կառավարությունը:

8. Սույն օրենքով նշանակված կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է կենսաթոշակառուի՝ պաշտոնավարման ընթացքում կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվելու դեպքում՝ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող ամսվա 1-ից՝ ստացված տեղեկատվության հիման վրա:

9. Սույն հոդվածի 8-րդ մասում նշված հանգամանքն ի հայտ գալու մասին տեղեկատվությունը կենսաթոշակ նշանակող մարմնին գրավոր տեղեկացնում է կենսաթոշակառուն՝ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ Կառավարության սահմանած կարգով:

10. Կենսաթոշակառուն պարտավոր է կենսաթոշակ նշանակող մարմնին տեղեկացնել այն հանգամանքների մասին, որոնց առկայությունը կարող է հանգեցնել կենսաթոշակի չափի նվազեցմանը կամ դրա վճարումը դադարեցնելուն: Սույն մասով

սահմանված պարտականությունը չկատարելու հետևանքով կենսաթոշակառուին ավել վճարված կենսաթոշակի գումարները ենթակա են հետգանձման (Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերականգնման, բռնագանձման) օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածում.

1) 3-11-րդ մասերը ճանաչել ուժը կորցրած,

2) 11-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 12-16-րդ մասերով.

«12. Քննչական կոմիտեի մասին» օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասով կենսաթոշակի իրավունք ձեռքբերած անձին նշանակված կենսաթոշակը համարվում է Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի.

1) 11-րդ կետով նշանակված կենսաթոշակ, եթե նշանակման օրվա դրությամբ անձի մասնագիտական ստաժը կազմել է առնվազն 20 օրացուցային տարի,

2) 14-րդ հոդվածով նշանակված կենսաթոշակ, եթե նշանակման օրվա դրությամբ անձի մասնագիտական ստաժը կազմել է 20 օրացուցային տարուց պակաս:

13. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին, 8-12-րդ մասերում նշված պաշտոններ զբաղեցրած անձանց՝ մինչև 2022 թվականի մայիսի 1-ը նշանակված կենսաթոշակները համարվում են սույն օրենքով նշանակված կենսաթոշակներ և հաշվարկվում են սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով՝ հիմք ընդունելով ազատվելու (լիազորությունները դադարելու կամ դադարեցվելու) օրվա դրությամբ պաշտոնային դրույքաչափը և հավելավճարի չափը: Այս դեպքում, եթե հաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է նախկին չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով: Սույն մասի համաձայն կենսաթոշակները հաշվարկվում են՝

1) կենսաթոշակի գործում պաշտոնից ազատվելու (լիազորությունները դադարելու կամ դադարեցվելու) օրվա դրությամբ պաշտոնային դրույքաչափի և հավելավճարի չափի մասին փաստաթղթի առկայության դեպքում՝ անկախ կենսաթոշակառուի գրավոր դիմում ներկայացնելու հանգամանքից՝ 2022 թվականի հունիսի 1-ից,

2) կենսաթոշակի գործում պաշտոնից ազատվելու (լիազորությունները դադարելու կամ դադարեցվելու) օրվա դրությամբ պաշտոնային դրույքաչափի և հավելավճարի չափի մասին փաստաթղթի բացակայության դեպքում՝ գրավոր դիմումը և անհրաժեշտ

փաստաթղթերը մինչև 2022 թվականի դեկտեմբերի 29-ը ներկայացնելու դեպքում՝ 2022 թվականի հունիսի 1-ից, նշված ժամկետից հետո ներկայացնելու դեպքում՝ դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

14. Դատախազի, հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն, պետական եկամուտների կոմիտեի քննչական մարմնում ինքնավար պաշտոն զբաղեցրած, մինչև 1974 թվականի հունվարի 1-ը ծնված անձինք, ովքեր 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ունեն առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ և չունեն սույն օրենքով կենսաթոշակ ստանալու իրավունք հաշվառվելու համար պարտավոր են մինչև 2022 թվականի դեկտեմբերի 29-ը գրավոր դիմել կենսաթոշակ նշանակող մարմին՝ ներկայացնելով անհրաժեշտ փաստաթղթեր: Սույն մասում նշված՝ մասնագիտական աշխատանքային ստաժը հաշվարկելու կարգը (մասնագիտական աշխատանքային ստաժում հաշվառվող ժամանակահատվածները) և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է Կառավարությունը: Սահմանային տարիքը լրանալու կամ անձնական դիմումի հիման վրա զբաղեցրած պաշտոնից ազատվելու դեպքում սույն մասում նշված անձանց կենսաթոշակը հաշվարկվում է ազատվելու օրվա դրությամբ ունեցած մասնագիտական աշխատանքային ստաժով՝ Կառավարության սահմանած կարգով: Այս դեպքում, եթե սույն մասի համաձայն հաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված չափից, ապա կենսաթոշակը վճարվում է սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված չափով:

15. Մինչև 2022 թվականի դեկտեմբերի 29-ը հաշվառվելու համար կենսաթոշակ նշանակող մարմին չդիմելու և չհաշվառվելու դեպքում սույն հոդվածի 14-րդ մասում նշված անձանց կենսաթոշակը հաշվարկվում է Օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով:

16. Եթե 2022 թվականի մայիսի 1-ի դրությամբ անձն ունի սույն օրենքով կենսաթոշակ ստանալու իրավունք, ապա 2022 թվականի մայիսի 1-ից հետո նրա կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվում է կենսաթոշակառուի դիմումի հիման վրա՝ սույն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն:»:

Հոդված 3. Օրենքի հավելվածի 4-րդ կետում 10-12-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10) հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն,

11) քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն,

12) պետական եկամուտների կոմիտեի քննչական մարմնում ինքնավար պաշտոն,»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-163-10.02.2022-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 2. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» 2014 թվականի փետրվարի 4-ի ՀՕ-1-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-6-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 2. Պետական պաշտոն զբաղեցրած անձին կենսաթոշակ նշանակելու պայմանները

1. Սույն օրենքով կենսաթոշակի իրավունք ունի՝

15) Սահմանադրական դատարանի դատավորը՝

ա. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով լիազորությունների դադարման դեպքում՝ անկախ տարիքից, կամ

բ. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով կամ 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հիմքերով, կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով լիազորությունների դադարման կամ դադարեցման դեպքերում,

16) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնը զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

17) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոն զբաղեցրած կամ հինգ տարի Հայաստանի

Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավորի պաշտոն զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

18) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հաշվեքննիչ պալատի անդամի կամ առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկիչ պալատի նախագահի կամ վեց տարի Ազգային ժողովի վերահսկիչ պալատի նախագահի պաշտոն զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

19) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոն զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

20) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ գլխավոր դատախազի պաշտոն զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

21) առնվազն մեկ ժամկետ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

22) դատավորի պաշտոնում առնվազն 10 օրացուցային տարի պաշտոնավարած անձը, որի լիազորությունները դադարեցվել կամ դադարել են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու կամ դատավորի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու հիմքերով.

23) դատախազի պաշտոն զբաղեցրած անձը, որը՝

ա. ~~պաշտոնից ազատվել է «Դատախազության մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 5-րդ, 6-րդ կետերով, 63-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքերից որևէ մեկով և~~ պաշտոնից ազատվելու (լիազորությունները դադարեցվելու կամ դադարելու) օրվա դրությամբ ունի առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական ստաժ, կամ

բ. պաշտոնից ազատվել (լիազորությունները դադարեցվել կամ դադարել) է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու կամ դատախազի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու հիմքերով.

24) հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձը, որը՝

ա. ~~պաշտոնից ազատվել է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 11-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով և~~ պաշտոնից ազատվելու (լիազորությունները դադարեցվելու կամ դադարելու) օրվա դրությամբ ունի առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական ստաժ, կամ

բ. պաշտոնից ազատվել (լիազորությունները դադարեցվել կամ դադարել) է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ~~կետով նախատեսված հիմքով~~ , 4-րդ մասի 1-ին կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով.

25) քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձը, որը՝

ա. ~~պաշտոնից ազատվել է «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով և~~ պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ ունի առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական ստաժ, կամ

բ. պաշտոնից ազատվել է «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով.

26)պետական եկամուտների կոմիտեի քննչական մարմնում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձը, որը՝

ա. ~~պաշտոնից ազատվել է «Հարկային ծառայության մասին» օրենքի 25.1-ին հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ կետերով, 2-րդ մասի 7-րդ կետով նախատեսված հիմքերից որևէ մեկով և~~ պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ ունի առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական ստաժ, կամ

բ. պաշտոնից ազատվել է ~~է~~ «Հարկային ծառայության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով նախատեսված հիմքով կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով.

27) սույն օրենքի N 1 հավելվածով սահմանված պաշտոններում, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարի պաշտոնում առնվազն ~~15~~ 10 օրացուցային տարի պաշտոնավարած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում~~: Սույն կետում նշված 15 օրացուցային տարում չեն հաշվառվում այն պաշտոններ զբաղեցնելու ժամանակահատվածները, որոնցից նա ազատվել է իր նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու~~

~~հիմքով կամ նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է (քրեական հետապնդումը չի իրականացվել) ոչ արդարացնող հիմքով կամ պաշտոնից ազատվել է կարգապահական պատասխանատվության ենթարկվելու հիմքով~~.

28) Հանրապետության նախագահը, Ազգային ժողովի պատգամավորը, Կառավարության անդամը, Սահմանադրական դատարանի և այլ դատարանների դատավորը, Բարձրագույն դատական խորհրդի անդամը, Մարդու իրավունքների պաշտպանը, Հաշվեքննիչ պալատի նախագահը, դատախազը, հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն, քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն, պետական եկամուտների կոմիտեի քննչական մարմնում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձը՝ իր պաշտոնեական պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առնչությամբ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչվելու դեպքում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված մեկից ավելի հիմքերով միաժամանակ կենսաթոշակի իրավունք ձեռք բերած անձին կենսաթոշակ նշանակվում է այդ հիմքերից մեկով՝ իր ընտրությամբ:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 14-րդ կետում նշված դեպքում պետական պաշտոն զբաղեցրած անձը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բժշկական կազմակերպություններում ապահովվում է բժշկական սպասարկմամբ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

4. Սույն օրենքով սահմանված պայմանները բավարարելու դեպքում պետական պաշտոն զբաղեցրած անձը սույն օրենքով կենսաթոշակի իրավունք ունի, եթե չի զբաղեցնում հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն: Սույն օրենքի իմաստով հանրային պաշտոն է համարվում նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի դատավորի պաշտոնը:

5. Սույն ~~հոդվածով~~ օրենքով սահմանված պայմանները բավարարելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացին, Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին: Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին կենսաթոշակի իրավունք ունի Հայաստանի Հանրապետության

բնակչության պետական ռեգիստրում Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեում հաշվառված լինելու ժամանակահատվածում:

6. Պետական պաշտոն զբաղեցրած անձը չունի սույն օրենքով կենսաթոշակի իրավունք, եթե պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ կամ դրանից հետո օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար, որը կատարել է պաշտոնավարման ընթացքում:

Հոդված 3. Պետական պաշտոն զբաղեցրած անձի ընտանիքի անդամների սոցիալական երաշխիքները պետական պաշտոն զբաղեցրած անձի մահանալու (զոհվելու) դեպքում

1. Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի պատգամավորի, Կառավարության անդամի, Սահմանադրական դատարանի և այլ դատարանների դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, Մարդու իրավունքների պաշտպանի, Հաշվեքննիչ պալատի նախագահի, դատախազի, հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն, քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն, պետական եկամուտների կոմիտեի քննչական մարմնում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձի կողմից իր պաշտոնեական պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առնչությամբ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով մահանալու (զոհվելու) դեպքում, սույն մասում նշված անձի՝

1) հուղարկավորությունը կազմակերպած անձին վճարվում է հուղարկավորության նպաստ,

2) ընտանիքին տրվում է միանվագ դրամական օգնություն,

3) ընտանիքի անդամներից մեկին՝ ընտանիքի համար նշանակվում է կենսաթոշակ: Ընտանիքի անդամներից մեկի պահանջով նրա բաժնեմասը Կառավարության սահմանած կարգով նշանակվում և վճարվում է առանձին՝ հաշվարկվելով համամասնորեն:

2. Սույն օրենքի իմաստով մահացած (զոհված) պետական պաշտոն զբաղեցրած անձի ընտանիքի անդամ են համարվում սույն հոդվածի 1-ին մասում նշված անձի՝

1) ծնողները, ամուսինը, եթե չեն աշխատում և մահվան օրվա դրությամբ՝

ա. լրացել է նրանց տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը, կամ

բ. ճանաչված են եղել հաշմանդամություն ունեցող անձ.

2) 18 տարին չլրացած երեխան (ուսումնական հաստատությունում առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորելու դեպքում՝ մինչև ուսումնական հաստատությունն ավարտելը, բայց մինչև իր 26 տարին լրանալը).

3) 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ զավակը, եթե նա հաշմանդամ է ճանաչվել մինչև իր 18 տարին լրանալը և ունի աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում,

4) ամուսինը կամ սույն հոդվածի 1-ին մասում նշված անձի երեխայի օրենքով սահմանված կարգով խնամակալ ճանաչված անձը՝ անկախ տարիքից, եթե նա զբաղված է սույն հոդվածի 1-ին մասում նշված անձի 14 տարին չլրացած երեխայի խնամքով, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների՝ նրա հետ հաշվառված է նույն բնակության վայրում (հասցեում) և չի աշխատում:

3. Միանվագ դրամական օգնություն, հուղարկավորության նպաստ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, նշանակելու և վճարելու կարգը, հուղարկավորության նպաստի չափը, միանվագ դրամական օգնության չափը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 4. Կենսաթոշակի ընտրության իրավունքը

3. Սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով միաժամանակ պետական կենսաթոշակների իրավունք ունեցող անձին նշանակվում է մեկ կենսաթոշակ՝ իր ընտրությամբ:

4. Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով պետական կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարում է անձին սույն օրենքով կենսաթոշակ նշանակելու օրվանից, իսկ այդ օրվանից հետո վճարված այլ կենսաթոշակի գումարը պահվում (հաշվանցվում) է սույն օրենքով նշանակված կենսաթոշակի գումարից:

Հոդված 5. Պետական պաշտոն զբաղեցրած անձի և նրա ընտանիքի անդամների կենսաթոշակը հաշվարկելու (վերահաշվարկելու) կարգը

12. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 13-րդ և 14-րդ կետերում նշված պաշտոններ զբաղեցրած անձին, սույն օրենքի 3-րդ հոդվածով

սահմանված դեպքում՝ նրա ընտանիքին նշանակվող կենսաթոշակի չափը հաշվարկվում է՝

Կ=Հ x Գ + ԿՀՍ x ԿՀՍԱ - ԿԿ բանաձևով, որտեղ՝

Կ-ն՝ կենսաթոշակի ամսական գումարն է,

Հ-ն՝ սույն օրենքով կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող հիմնական կենսաթոշակի չափը (այսուհետ՝ հիմնական կենսաթոշակ),

Գ-ն՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով անձի զբաղեցրած պաշտոնների ~~(որոնք զբաղեցնելու ժամանակահատվածները հաշվառվում են կենսաթոշակը հաշվարկելու համար ստաժում)~~ համար սահմանված առավելագույն գործակիցը (այսուհետ՝ գործակից),

ԿՀՍ-ն՝ կենսաթոշակը հաշվարկելու համար ստաժը՝ սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում նշված այն պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածը (պաշտոններ զբաղեցնելու ժամանակահատվածների հանրագումարը)~~, որոնցից նա չի ազատվել է իր նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու հիմքով կամ նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է (քրեական հետապնդումը) չի իրականացվել ոչ արդարացնող հիմքով կամ պաշտոնից ազատվել է կարգապահական պատասխանատվության ենթարկվելու հիմքով.)~~

ԿՀՍԱ-ն՝ կենսաթոշակը հաշվարկելու համար ստաժի մեկ տարվա արժեքը (այսուհետ՝ մեկ տարվա արժեք),

ԿԿ՝ անուիտետի կամ ծրագրային վճարների ձևով վճարվող կուտակային կենսաթոշակի՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով տվյալ պաշտոն զբաղեցրած անձի համար (օգտին) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված լրացուցիչ միջոցներից ձևավորված ամսական չափը (այսուհետ՝ կուտակային կենսաթոշակի՝ պետական բյուջեի հատկացումներից ձևավորված չափ):

13. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հաշվարկված կենսաթոշակի չափը վերահաշվարկվում է հիմնական կենսաթոշակի չափը, ստաժի մեկ տարվա արժեքը փոխվելու դեպքում:

14. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 5-րդ, 7-րդ և 8-րդ կետերում նշված պաշտոններ զբաղեցրած անձին կամ սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված դեպքում նրա ընտանիքին նշանակվող կենսաթոշակի չափը հաշվարկվում է.

3) զբաղեցրած վերջին պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ այդ պաշտոնի համար «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված պաշտոնային դրույքաչափի ու հավելավճարի հանրագումարի 55 տոկոսի չափով, եթե տվյալ պաշտոն զբաղեցրած անձը կուտակային բաղադրիչի մասնակից չէ կամ կուտակային բաղադրիչի մասնակից է, սակայն նրա համար առկա չէ կուտակային կենսաթոշակի՝ պետական բյուջեի հատկացումներից ձևավորված չափ,

4) զբաղեցրած վերջին պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ այդ պաշտոնի համար «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված պաշտոնային դրույքաչափի ու հավելավճարի հանրագումարի 55 տոկոսի և նրան վճարվող կուտակային կենսաթոշակի՝ պետական բյուջեի հատկացումներից ձևավորված չափի տարբերության չափով, եթե տվյալ պաշտոն զբաղեցրած անձը կուտակային բաղադրիչի մասնակից է և նրա համար առկա է կուտակային կենսաթոշակի՝ պետական բյուջեի հատկացումներից ձևավորված չափ:

15. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ, 9-12-րդ կետում նշված պաշտոններ զբաղեցրած անձին կամ սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված դեպքում նրա ընտանիքին նշանակվող կենսաթոշակի չափը հաշվարկվում է.

3) զբաղեցրած վերջին պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ այդ պաշտոնի համար «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված պաշտոնային դրույքաչափի ու հավելավճարի հանրագումարի 50 տոկոսի չափով, եթե տվյալ պաշտոն զբաղեցրած անձը կուտակային բաղադրիչի մասնակից չէ կամ կուտակային բաղադրիչի մասնակից է, սակայն նրա համար առկա չէ կուտակային կենսաթոշակի՝ պետական բյուջեի հատկացումներից ձևավորված չափ:

4) զբաղեցրած վերջին պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ այդ պաշտոնի համար «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված պաշտոնային դրույքաչափի ու

հավելավճարի հանրագումարի 50 տոկոսի և նրան վճարվող կուտակային կենսաթոշակի՝ պետական բյուջեի հատկացումներից ձևավորված չափի տարբերության չափով, եթե տվյալ պաշտոն զբաղեցրած անձը կուտակային բաղադրիչի մասնակից է և նրա համար առկա է կուտակային կենսաթոշակի՝ պետական բյուջեի հատկացումներից ձևավորված չափ:

16. Սույն հոդվածով հաշվարկված կենսաթոշակի չափը չի կարող գերազանցել այն պաշտոնային դրույքաչափի 92 տոկոսը, որից հաշվարկվել է կենսաթոշակը:

17. Սույն հոդվածով հաշվարկված կենսաթոշակի չափը վերահաշվարկվում է.

3) սույն օրենքով կենսաթոշակը նշանակելուց հետո անուիտետի կամ ծրագրային վճարների ձևով վճարվող կուտակային կենսաթոշակ նշանակելու դեպքում,

4) նշանակված կուտակային կենսաթոշակի՝ պետական բյուջեի հատկացումներից ձևավորված չափը փոփոխվելու կամ ծրագրային վճարների ձևով վճարվող կուտակային կենսաթոշակը դադարելու դեպքում:

18. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում նշված պաշտոն զբաղեցրած անձի կենսաթոշակի չափը հաշվարկելիս պաշտոնային դրույքաչափը ու հավելավճարը հաշվարկվում են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված կարգով՝ հիմք ընդունելով պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ նրա՝ դատավորի պաշտոնում աշխատանքային ստաժի տևողությունը և «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով Վճռաբեկ դատարանի դատավորի համար սահմանված գործակիցը:

19. Սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն կենսաթոշակի չափը վերահաշվարկվում է այդ մասում նշված հանգամանքն առաջանալու ամսին հաջորդող ամսվա 1-ից: Կենսաթոշակի չափը վերահաշվարկելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքով սահմանված մասնակիցների ռեեստրը վարողը կենսաթոշակ նշանակող մարմնին տրամադրում է Կառավարության սահմանած կարգով:

20. Սույն օրենքով նշանակված կենսաթոշակի չափը վերահաշվարկվում է նաև կենսաթոշակառուի ներկայացրած գրավոր դիմումի և սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում նշված պաշտոն զբաղեցնելու վերաբերյալ լրացուցիչ փաստաթղթի հիման վրա՝ դիմելու ամսին հաջորդող ամսվա 1-ից՝ Կառավարության սահմանած կարգով: Եթե

սույն մասով վերահաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է նախկին չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով:

21. Սույն հոդվածի 1-ին մասում նշված՝ կենսաթոշակի չափը հաշվարկելու համար ստաժը (ստաժում հաշվառվող ժամանակահատվածները), հիմնական կենսաթոշակի չափը, ստաժի մեկ տարվա արժեքը և սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-12-րդ կետերում նշված մասնագիտական ստաժը (մասնագիտական ստաժում հաշվառվող ժամանակահատվածները) հաշվարկելու կարգը սահմանում է Կառավարությունը:

22. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-12-րդ կետերում նշված մասնագիտական ստաժում և 13-րդ կետում նշված ~~15~~10 օրացուցային տարում, սույն հոդվածի 1-ին մասում նշված՝ կենսաթոշակի չափը հաշվարկելու համար ստաժում կադրերի ռեզերվում գտնվելու ժամանակահատվածը չի հաշվառվում:

Հոդված 6. Պետական պաշտոն զբաղեցրած անձի, նրա ընտանիքի անդամների կենսաթոշակ ստանալու իրավունքը

1. Սույն օրենքով կենսաթոշակի իրավունք ունեցող անձը կենսաթոշակ ստանալու իրավունք ունի, եթե օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել է կենսաթոշակ նշանակող մարմին, և նրան նշանակվել է կենսաթոշակ:

2. Կենսաթոշակը նշանակվում է՝

1) սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 8-12-րդ կետերում նշված պաշտոնից ազատվելու (լիազորությունները դադարելու կամ դադարեցվելու) օրվանից, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են այդ օրվանից հետո՝ 6 ամսվա ընթացքում.

2) սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ և 13-րդ կետերում նշված պետական պաշտոն զբաղեցրած անձի՝ 65 տարին լրանալու օրվանից, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են այդ օրվանից հետո՝ 6 ամսվա ընթացքում.

3) սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետերում նշված պետական պաշտոն զբաղեցրած անձի՝ հաշմանդամ ճանաչվելու օրվանից, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են այդ օրվանից հետո՝ 6 ամսվա ընթացքում.

4) սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում նշված պետական պաշտոն զբաղեցրած անձի մահվան գրանցման օրվանից, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են այդ օրվանից հետո՝ 6 ամսվա ընթացքում.

5) դիմելու օրվանից, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են սույն մասի 1-4-րդ կետերով սահմանված 6-ամսյա ժամկետը լրանալուց հետո:

3. Սույն օրենքով կենսաթոշակը նշանակվում է ոչ ավելի վաղ, քան կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու օրվանից:

4. Սույն օրենքով կենսաթոշակը նշանակվում և վճարվում է, կենսաթոշակը վճարելը դադարեցվում և վերսկսվում է, կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում և վերականգնվում է, չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է, կենսաթոշակից պահումները կատարվում են, ավել վճարված կենսաթոշակի գումարները բռնագանձվում, հետ գանձվում և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերականգնվում են «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով սահմանված կարգով, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

5. Պետական պաշտոն զբաղեցրած անձի՝ սույն օրենքով նշանակված կենսաթոշակ ստանալու իրավունքը չի կարող դադարեցվել այլ աշխատանք կատարելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձը զբաղեցնում է հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն:

6. Հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու հիմքով կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցված լինելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվում է՝ այդ պաշտոնից ազատվելուց հետո մեկ ամսվա ընթացքում գրավոր դիմելու և անհրաժեշտ փաստաթուղթ ներկայացնելու դեպքում՝ ազատվելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից, իսկ այդ ժամկետը լրանալուց հետո դիմելու դեպքում՝ գրավոր դիմելու և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Այս դեպքում կենսաթոշակը վերահաշվարկվում է այն հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցրած անձի կենսաթոշակը հաշվարկելու՝ սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով, որից ազատվելու հիմքով վերականգնվում է անձի կենսաթոշակ ստանալու իրավունքը: Եթե վերահաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է նախկին չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով:

~~6~~7. Սույն օրենքով կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, կենսաթոշակ նշանակող մարմինը, կենսաթոշակ նշանակելու և վճարելու կարգը սահմանում է Կառավարությունը:~~»։~~

8. Սույն օրենքով նշանակված կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է կենսաթոշակառուի՝ պաշտոնավարման ընթացքում կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվելու դեպքում՝ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող ամսվա 1-ից՝ ստացված տեղեկատվության հիման վրա:

9. Սույն հոդվածի 8-րդ մասում նշված հանգամանքն ի հայտ գալու մասին տեղեկատվությունը կենսաթոշակ նշանակող մարմնին գրավոր տեղեկացնում է կենսաթոշակառուն՝ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ Կառավարության սահմանած կարգով:

10. Կենսաթոշակառուն պարտավոր է կենսաթոշակ նշանակող մարմնին տեղեկացնել այն հանգամանքների մասին, որոնց առկայությունը կարող է հանգեցնել կենսաթոշակի չափի նվազեցմանը կամ դրա վճարումը դադարեցնելուն: Սույն մասով սահմանված պարտականությունը չկատարելու հետևանքով կենսաթոշակառուին ավել վճարված կենսաթոշակի գումարները ենթակա են հետգանձման (Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերականգնման, բռնագանձման) օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածում.

1) 3-11-րդ մասերը ճանաչել ուժը կորցրած,

2) 11-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 12-~~րդ և 13~~16-րդ մասերով.

«12. Քննչական կոմիտեի մասին» օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասով կենսաթոշակի իրավունք ձեռքբերած անձին նշանակված կենսաթոշակը համարվում է Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի.

1) 11-րդ կետով նշանակված կենսաթոշակ, եթե նշանակման օրվա դրությամբ անձի մասնագիտական ստաժը կազմել է առնվազն 20 օրացուցային տարի,

2) 14-րդ հոդվածով նշանակված կենսաթոշակ, եթե նշանակման օրվա դրությամբ անձի մասնագիտական ստաժը կազմել է 20 օրացուցային տարուց պակաս:

13. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին, 8-12-րդ մասերում նշված պաշտոններ զբաղեցրած անձանց՝ մինչև 2022 թվականի մայիսի 1-ը նշանակված կենսաթոշակները համարվում են սույն օրենքով նշանակված կենսաթոշակներ և հաշվարկվում են սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով՝ հիմք ընդունելով ազատվելու (լիազորությունները դադարելու կամ դադարեցվելու) օրվա դրությամբ պաշտոնային դրույքաչափը և հավելավճարի չափը: Այս դեպքում, եթե հաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է նախկին չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով: Սույն մասի համաձայն կենսաթոշակները հաշվարկվում են՝

2) կենսաթոշակի գործում պաշտոնից ազատվելու (լիազորությունները դադարելու կամ դադարեցվելու) օրվա դրությամբ պաշտոնային դրույքաչափի և հավելավճարի չափի մասին փաստաթղթի առկայության դեպքում՝ անկախ կենսաթոշակառուի գրավոր դիմում ներկայացնելու հանգամանքից՝ 2022 թվականի հունիսի 1-ից,

2) կենսաթոշակի գործում պաշտոնից ազատվելու (լիազորությունները դադարելու կամ դադարեցվելու) օրվա դրությամբ պաշտոնային դրույքաչափի և հավելավճարի չափի մասին փաստաթղթի բացակայության դեպքում՝ գրավոր դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը մինչև 2022 թվականի դեկտեմբերի 29-ը ներկայացնելու դեպքում՝ 2022 թվականի հունիսի 1-ից, նշված ժամկետից հետո ներկայացնելու դեպքում՝ դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

14. ~~Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ դատախազի~~ Դատախազի, հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն, պետական եկամուտների կոմիտեի քննչական մարմնում ինքնավար պաշտոն զբաղեցրած, մինչև 1974 թվականի հունվարի 1-ը ծնված անձինք, ովքեր 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ունեն առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ~~, սույն օրենքն ուժն մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում,~~ և չունեն սույն օրենքով կենսաթոշակ ստանալու իրավունք հաշվառվելու համար պարտավոր են մինչև 2022 թվականի դեկտեմբերի 29-ը գրավոր դիմել կենսաթոշակ նշանակող մարմին՝ ներկայացնելով անհրաժեշտ փաստաթղթեր: Սույն մասում նշված՝ մասնագիտական աշխատանքային ստաժը հաշվարկելու կարգը (մասնագիտական աշխատանքային ստաժում հաշվառվող ժամանակահատվածները) և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է Կառավարությունը: Սահմանային տարիքը լրանալու կամ անձնական դիմումի հիման

վրա զբաղեցրած պաշտոնից ազատվելու դեպքում սույն մասում նշված անձանց կենսաթոշակը հաշվարկվում է ~~սույն օրենքն ուժի մեջ մտնելու~~ազատվելու օրվա դրությամբ ունեցած մասնագիտական աշխատանքային ստաժով՝ Կառավարության սահմանած կարգով: Այս դեպքում, եթե սույն մասի համաձայն հաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է ~~Օրենքի~~սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված չափից, ապա կենսաթոշակը վճարվում է ~~Օրենքի~~սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված չափով:

15. ~~14. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում,~~ Մինչև 2022 թվականի դեկտեմբերի 29-ը հաշվառվելու համար կենսաթոշակ նշանակող մարմին չդիմելու և չհաշվառվելու դեպքում սույն հոդվածի ~~13~~14-րդ մասում նշված անձանց կենսաթոշակը հաշվարկվում է Օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով:

16. Եթե 2022 թվականի մայիսի 1-ի դրությամբ անձն ունի սույն օրենքով կենսաթոշակ ստանալու իրավունք, ապա 2022 թվականի մայիսի 1-ից հետո նրա կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվում է կենսաթոշակառուի դիմումի հիման վրա՝ սույն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն:»:

Հոդված 3. Օրենքի հավելվածի 4-րդ կետում 10-12-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10) հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն,

11) քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն,

12) պետական եկամուտների կոմիտեի քննչական մարմնում ինքնավար պաշտոն,»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

~~Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին, 8-12-րդ մասերում նշված պաշտոններ զբաղեցրած անձանց՝ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակները համարվում են Օրենքով նշանակված կենսաթոշակներ և հաշվարկվում են Օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով՝ հիմք ընդունելով ազատվելու (լիազորությունները դադարելու կամ դադարեցվելու) օրվա դրությամբ պաշտոնային դրույքաչափը և~~

~~հավելավճարի չափը: Այս դեպքում, եթե հաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է նախկին չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով: Սույն մասի համաձայն կենսաթոշակները հաշվարկվում են՝~~

~~2) կենսաթոշակի գործում պաշտոնից ազատվելու (լիազորությունները դադարելու կամ դադարեցվելու) օրվա դրությամբ պաշտոնային դրույքաչափի և հավելավճարի չափի մասին փաստաթղթի առկայության դեպքում՝ անկախ կենսաթոշակառուի գրավոր դիմում ներկայացնելու հանգամանքից՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից,~~

3) ~~կենսաթոշակի գործում պաշտոնից ազատվելու (լիազորությունները դադարելու կամ դադարեցվելու) օրվա դրությամբ պաշտոնային դրույքաչափի և հավելավճարի չափի մասին փաստաթղթի բացակայության դեպքում՝ գրավոր դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը սույն օրենքն ուժի մեջ մտնելու ամսվան հաջորդող 6 ամսվա ընթացքում ներկայացնելու դեպքում՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից, 6 ամսյա ժամկետից հետո ներկայացնելու դեպքում՝ դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:~~

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-163-10.02.2022-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	**Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը**	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկություն (փոփոխություն, լրացում)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
1.	ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցությունն	1. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող 2-րդ հոդվածի 1-ին մաս	1) 2-րդ կետում «65 տարին լրանալու դեպքում» բառերը փոխարինել «անկախ տարիքից» բառերով: 2) 6-րդ կետում «65 տարին լրանալու դեպքում» բառերը փոխարինել «անկախ տարիքից» բառերով,	Չի ընդունվել: «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) անկախ տարիքից կենսաթոշակի իրավունք է նախատեսված Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոն զբաղեցրած անձի համար: 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 165-րդ հոդվածով և Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջների հաշվառմամբ Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոն զբաղեցրած	Չի ընդունվել:

				անձը կենսաթոշակի **իրավունք է ձեռք բերում 52 տարեկանում՝ մասնագիտական աշխատանքի առնվազն 27 տարվա (որից 12-ը ՍԴ դատավորի պաշտոնում) փորձառությամբ**: Առաջարկությունն ընդունելու դեպքում՝ 1) 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 192-րդ, 48-րդ հոդվածներով սահմանված պահանջների հաշվառմամբ Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոն զբաղեցրած անձը կենսաթոշակի իրավունք ձեռք կբերի **31 տարեկանում՝ բարձրագույն կրթություն ունենալու պարագայում**, 2) 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 177-րդ հոդվածով սահմանված պահանջների հաշվառմամբ գլխավոր դատախազի պաշտոն զբաղեցրած անձը կենսաթոշակի իրավունք է ձեռք բերում **41 տարեկանում՝ մասնագիտական աշխատանքի առնվազն 16 տարվա (որից 6-ը գլխավոր դատախազի պաշտոնում)**	

				փորձառությամբ: Կարևորելով Մարդու իրավունքների պաշտպանի և գլխավոր դատախազի պետական լիազորությունները, այնուհանդերձ, նրանց նման բացառիկ արտոնությամբ օժտելը նպատակահարմար չէ: Հարկ է նշել, որ Օրենքով սոցիալական բարձր երաշխիքներ նախատեսված են հենց առանձնահատուկ պետական լիազորություններով օժտված՝ պետական պաշտոններ (Աժ պատգամավոր, ԲԴԽ անդամ, վերահսկիչ պալատի նախագահ) սահմանադրական ժամկետներով պաշտոնավարող անձանց համար և դրանք, ըստ կարևորության, աստիճանակարգելը Օրենքի խնդիրը չէ: Միաժամանակ հարկ է նշել, որ նույն իրավական կարգավիճակում գտնվող անձանց համար հավասար պայմաններ սահմանելու նպատակով Նախագծով -առաջարկվում է ամբողջացնել այն պաշտոնների կազմը, որոնք հնարավոր է զբաղեցնել սահմանադրական	

				ժամկետով: Արդյունքում, առնվազն մեկ սահմանադրական ժամկետ գլխավոր դատախազի պաշտոն զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում Օրենքով ձեռք է բերում կենսաթոշակի իրավունք: Ընդ որում, նրա կենսաթոշակի չափը, անկախ մասնագիտական ստաժի տևողությունից, հաշվարկվում է առնվազն 20 տարի դատախազի պաշտոն զբաղեցրած անձի կենաթոշակի հաշվարկման կարգով:	
			3) 8-րդ կետում «հիմքերով» բառերից հետո լրացնել «կամ դատավորի պաշտոնում առնվազն 25 օրացուցային տարի պաշտոնավարած անձը, որի լիազորությունները դադարել են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով»	Չի ընդունվում: Առաջարկը կենսաթոշակային ապահովության իրավունքի իրացման տեսանկյունից խնդրահարույց չէ: Սակայն առաջարկն ընդունելու դեպքում դատական համակարգում հնարավոր է առաջանա մասնագետների պակասի խնդիր:	
2.	ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցությունն	2.«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ	Լրացնել նոր՝ 5.1 մասով. Քրեական հետապնդման մարմիններում պաշտոն զբաղեցրած և առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական ստաժ ունեցող անձը չի կարող զրկվել	Ընդունվել է: Առաջարկը բովանդակային առումով իրացված է Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող՝	Ընդունվել է:

		սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող 6-րդ հոդված	սույն օրենքով նշանակված կենսաթոշակ ստանալու իրավունքից, բացառությամբ այն դեպքերի երբ նա օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռով դատապարտվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կատարելու համար:	Օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասում և համապատասխան փոփոխություններ են կատարվել առաջարկվող կարգավորման հետ փոխկապակցված՝ նույն հոդվածի 1-ին մասի 9-13-րդ կետերում:	
3.	ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցությունն	3.«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված	Լրացնել նոր՝ 2-րդ մասով. «2. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 9-12-րդ հոդվածների իմաստով մասնագիտական ստաժ է համարվում Հայաստանի Հանրապետության քրեական հետապնդման մարմիններում աշխատանքի այն ժամանակահատվածները, որոնց ընթացքում կատարվել անձի կրթության կամ անհրաժեշտ որակավորման մասին վկայականում նշված մասնագիտությամբ աշխատանք կամ զբաղեցվել է որոշակի պաշտոն կամ կատարվել է աշխատանք աշխատանքի առանձնահատուկ պայմաններում, ինչպես նաև այլ ժամանակահատվածներ, որոնք թույլատրվում է հաշվարկել տվյալ տիպի աշխատանքային ստաժում:»:	Չի ընդունվել: Իրավակիրառ պրակտիկան ցույց է տալիս, որ մասնագիտական ստաժում հաշվառվող ժամանակահատվածները, մասնագիտական ստաժը հաշվարկելու կանոնները նպատակահարմար է սահմանել օրենքից ավելի ցածր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտով՝ կառավարության որոշմամբ: Այս կերպ ապահովվում է հարաբերությունների կարգավորումը սահմանել առավել ճկուն ընթացակարգերով: Այս դեպքում հարկ է նկատի ունենալ, որ համապատասխան իրավական ակտի նախագիծը շրջանառվում է օրենսդրությամբ	Չի ընդունվել:

				սահմանված կարգով, այդ թվում՝ ներկայացվում է շահագրգիռ մարմինների կարծիքին: Ըստ այդմ, խնդրո առարկա հարցը կարգավորելու համար Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող՝ Օրենքի 5-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված է, որ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-12-րդ կետերում նշված մասնագիտական ստաժը (մասնագիտական ստաժում հաշվառվող ժամանակահատվածները) հաշվարկելու կարգը սահմանում է Կառավարությունը:	
4.	ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցությունն	4.«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված	Լրացնել նոր՝ 3-րդ մասով. «3. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով սահմանված կարգը կիրառվում է բացառապես այն անձանց նկատմամբ, որոնց պաշտոնավարումը սույն օրենքի N 1 հավելվածով սահմանված պաշտոններում կամ օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարի պաշտոնում սկսել է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո:	Ընդունվել է ի գիտություն: Հաշվի առնելով Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 28-ի նիստի ընթացքում պատգամավորների, այդ թվում՝ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Ա. Վարդևանյանի կողմից հնչեցրած առաջարկությունները, Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով առաջարկվող	Ընդունվել է ի գիտություն:

				փոփոխությունը (15 տարի օրացուցային տարի պաշտոնավարելու վերաբերյալ) նախագծից հանվել է, ուստի սույն փոփոխությունը կատարելու անհրաժեշտություն այլևս չկա:	
5.	ԱԺ պատգամա-վոր Հերիքնազ Տիգրանյան	«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող 2-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետ	Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվում է խմբագրել Օրենքի 2-րդ հոդվածը, որի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կենսաթոշակի իրավունք է ձեռք բերում նաև քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձը, որն ունի առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական ստաժ: Առաջարկում եմ նախագծով հստակեցնել «մասնագիտական ստաժ» հասկացությունը և Քննչական կոմիտեի քննիչների աշխատանքային ստաժում ներառել ՀՀ ոստիկանությունում որպես հետաքննիչ աշխատած ժամանակահատվածը:	Չի ընդունվել: Օրենքի նպատակը առանձին պաշտոններ զբաղեցրած անձանց կենսաթոշակի իրավունքի իրացման պայմանների միասնականացումն է: Նախագծով նախատեսվում է սահմանել, որ մասնագիտական ստաժը (մասնագիտական ստաժում հաշվառվող ժամանակահատվածները) հաշվարկելու կարգը սահմանվելու է Կառավարության կողմից: Այս առումով Օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված՝ մասնագիտական ստաժով կենսաթոշակի իրավունք ձեռք բերող բոլոր պետական պաշտոններ (դատախազներ, հակակոռուպցիոն կոմիտեում, քննչական կոմիտեում, պետական եկամուտների կոմիտեի քննչական մարմնում ինքնավար պաշտոն) զբաղեցրած անձանց համար	Չի ընդունվել:

				մասնագիտական ստաժում հաշվառվող ժամանակահատվածները պետք է սահմանվեն նույն մոտեցմամբ: Ըստ այդմ, քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձանց մասնագիտական ստաժում ներառվող ժամանակահատվածների համար առանձնահատկություն սահմանելու հարցը չի բխում Օրենքի տրամաբանությունից: Հակառակ դեպքում, ակնհայտորեն կխախտվի խտրականության արգելքը ամրագրած՝ Սահմանադրության 29-րդ հոդվածի պահանջը, քանի որ միևնույն փաստական հանգամանքներում գտնվող անձանց համար կսահմանվեն տարբեր կարգավորումներ: Բացի այդ, կստեղծվի մի իրավիճակ, երբ նույն ստաժի հաշվառմամբ մի դեպքում նշանակվում է զինվորական կենսաթոշակ, մյուս դեպքում՝ Օրենքով սահմանված կենսաթոշակ, ինչը խտրականության արգելքի սկզբունքի խախտման ևս մեկ	

				դրսևորում է: Հարկ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ մինչև 01.07.2014թ. քննչական գործունեություն իրականացրած անձինք ունեցել են երկարամյա զինվորական կենսաթոշակի իրավունք, այդ անձանց համար «Քննչական կոմիտեի մասին» օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասով արդեն իսկ նախատեսված է, որ այդ մասով սահմանված հիմքով կենսաթոշակի իրավունք ձեռք բերելիս ծառայության ստաժում օրացուցային հաշվարկով հաշվառվում են զինվորական ծառայության ժամանակահատվածը և քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածը: Այս դեպքում կենսաթոշակը նշանակելուն առնչվող հարաբերությունները, այդ թվում՝ զինվորական ծառայության ստաժում հաշվառվող ժամանակահատվածները սահմանված են ՀՀ կառավարության 2016 թվականի հունվարի 20-ի N 30-Ն որոշման	

				հավելվածի 5-րդ կետով: Միաժամանակ հարկ է նկատի ունենալ նաև, որ աշխատանքային քննարկումների արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ հետաքննիչների կենսաթոշակային ապահովության հարցին անդրադարձ կկատարվի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի կիրակումն ապահովելու նպատակով ընդունվելիք իրավական ակտերի նախագծերի շրջանակում:	
6.	Կառավարություն	1. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-12-րդ կետ	1) 9-րդ կետի «ա» պարբերությունից հանել «պաշտոնից ազատվել է «Դատախազության մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 5-րդ, 6-րդ կետերով, 63-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքերից որևէ մեկով և» բառերը, «ազատվելու» բառից հետո լրացնել «(լիազորությունները դադարեցվելու կամ դադարելու)» բառերը, իսկ «բ» պարբերությունը «պաշտոնից ազատվել» բառից հետո լրացնել «(լիազորությունները դադարեցվել կամ դադարել)» բառերով. 2) 10-րդ կետի «ա» պարբերությանից հանել «պաշտոնից ազատվել է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին»	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-12-րդ կետերը շարադրվել են առաջարկվող խմբագրությամբ:	Ընդունվել է:

			օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 11-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով և» բառերը, «ազատվելու» բառից հետո լրացնել «(լիազորությունները դադարեցվելու կամ դադարելու)» բառերով, իսկ «բ» պարբերությունը «պաշտոնից ազատվել» բառից հետո լրացնել «(լիազորությունները դադարեցվել կամ դադարել)» բառերով, «կետով նախատեսված հիմքով» բառերը փոխարինել «, 4-րդ մասի 1-ին կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով» բառերով, 3) 11-րդ կետի «ա» պարբերությունից հանել «պաշտոնից ազատվել է «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով և» բառերը, 4) 12-րդ կետի «ա» պարբերությունից հանել «պաշտոնից ազատվել է «Հարկային ծառայության մասին» օրենքի 25.1-ին հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ կետերով, 2-րդ մասի 7-րդ կետով նախատեսված հիմքերից որևէ մեկով և» բառերը: Առաջարկը նպատակ ունի հստակեցնել կենսաթոշակի իրավունք տվող՝		

			պաշտոնից ազատվելու «(լիազորությունները դադարեցվելու կամ դադարելու) հիմքերը, նախատեսելով, որ պետական պաշտոն զբաղեցրած անձը չունի սույն օրենքով կենսաթոշակի իրավունք, եթե պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ կամ դրանից հետո օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար, որը կատարել է պաշտոնավարման ընթացքում:		
7.	Կառավարություն	2. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող 2-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետ	2-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետում «15» թիվը փոխարինել «10» թվով և հանել «: Սույն կետում նշված 15 օրացուցային տարում չեն հաշվառվում այն պաշտոններ զբաղեցնելու ժամանակահատվածները, որոնցից նա ազատվել է իր նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու հիմքով կամ նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է (քրեական հետապնդումը չի իրականացվել) ոչ արդարացնող հիմքով կամ պաշտոնից ազատվել է կարգապահական պատասխանատվության ենթարկվելու հիմքով» բառերը: Առաջարկը նպատակ ունի անփոփոխ թողնել օրենքի գործող կարգավորումը,	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը շարադրվել են առաջարկվող խմբագրությամբ:	Ընդունվել է:

			որի համաձայն՝ Օրենքով սահմանված կենսաթոշակի իրավունք ունի Օրենքի հավելված N 1-ով սահմանված պաշտոններում, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարի պաշտոնում առնվազն **10 տարի** պաշտոնավարած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում: Առաջարկի 2-րդ մասը փոխկապակցված է Կառավարության առաջարկների 1-ին կետի հետ:		
8.	Կառավարություն	3.«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող 2-րդ հոդված	2-րդ հոդվածի 5-րդ մասում «հոդվածով» բառը փոխարինել «օրենքով» բառով:	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող 2-րդ հոդվածի 5-րդ մասում «հոդվածով» բառը փոխարինել «օրենքով» բառով:	Ընդունվել է:
9.	Կառավարություն	3.«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման,	2-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ մասով. «6. Պետական պաշտոն զբաղեցրած անձը չունի սույն օրենքով կենսաթոշակի	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող՝ Օրենքի 2-րդ	Ընդունվել է:

		սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող 2-րդ հոդված	իրավունք, եթե պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ կամ դրանից հետո օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար, որը կատարել է պաշտոնավարման ընթացքում:»: Առաջարկը փոխկապակցված է Կառավարության առաջարկների 1-ին կետի հետ:	հոդվածի 4-րդ մասը լրացվել է նոր նախադասությամբ՝ առաջարկվող խմբագրությամբ:	
10.	Կառավարություն	4. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող 5-րդ հոդվածի 1-ին մաս	5-րդ հոդվածի 1-ին մասի՝ 1) 4-րդ պարբերությունից հանել «(որոնք զբաղեցնելու ժամանակահատվածները հաշվառվում են կենսաթոշակը հաշվարկելու համար ստաժում)» բառերը, 2) 5-րդ պարբերությունից հանել «, որոնցից նա չի ազատվել է իր նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու հիմքով կամ նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է (քրեական հետապնդումը) չի իրականացվել ոչ արդարացնող հիմքով կամ պաշտոնից ազատվել է կարգապահական պատասխանատվության ենթարկվելու հիմքով» բառերը: Առաջարկը փոխկապակցված է	Ընդունվել է: 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ պարբերությունները խմբագրվել են՝ համաձայն առաջարկի:	Ընդունվել է:

			Կառավարության առաջարկների 1-ին կետի հետ:		
11.	Կառավարություն	5. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող 5-րդ հոդվածի 11-րդ մաս	5-րդ հոդվածի 11-րդ մասի «15» թիվը փոխարինել «10» թվով: Առաջարկը փոխկապակցված է Կառավարության առաջարկների 1-ին կետի հետ:	Ընդունվել է: 5-րդ հոդվածի 11-րդ մասում կատարվել է փոփոխություն՝ համաձայն առաջարկի:	Ընդունվել է:
12.	Կառավարություն	6. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով	6-րդ հոդվածը լրացնել նոր՝ 8-10-րդ մասերով հետևյալ բովանդակությամբ՝ «8. Սույն օրենքով նշանակված կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է կենսաթոշակառուի՝ պաշտոնավարման ընթացքում կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվելու դեպքում՝ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող ամսվա 1-ից՝ ստացված տեղեկատվության հիման	Ընդունվել է: 6-րդ հոդվածը լրացվել է նոր՝ 8-10-րդ մասերով՝ համաձայն առաջարկի:	Ընդունվել է:

		խմբագրվող 6-րդ հոդված	վրա: 9. Սույն հոդվածի 8-րդ մասում նշված հանգամանքն ի հայտ գալու մասին տեղեկատվությունը կենսաթոշակ նշանակող մարմնին գրավոր տեղեկացնում է կենսաթոշակառուն՝ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ Կառավարության սահմանած կարգով: 10. Կենսաթոշակառուն պարտավոր է կենսաթոշակ նշանակող մարմնին տեղեկացնել այն հանգամանքների մասին, որոնց առկայությունը կարող է հանգեցնել կենսաթոշակի չափի նվազեցմանը կամ դրա վճարումը դադարեցնելուն: Սույն մասով սահմանված պարտականությունը չկատարելու հետևանքով կենսաթոշակառուին ավել վճարված կենսաթոշակի գումարները ենթակա են հետգանձման (Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերականգնման, բռնագանձման) օրենքով սահմանված կարգով:»: Առաջարկը փոխկապակցված է Կառավարության առաջարկների 1-ին կետի հետ:		
13.	Կառավարություն	7. «Պաշտոնատար անձանց	2-րդ հոդվածի 2-րդ մասում «12-րդ և 13-րդ» բառերը փոխարինել «12-16-րդ»	Ընդունվել է:	Ընդունվել է:

		գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող 2-րդ հոդվածի 2-րդ մաս	բառերով: Խմբագրական է՝ պայմանավորված ստորև բերվող առաջարկներով:	2-րդ հոդվածի 2-րդ մասում կատարվել է փոփոխություն՝ համաձայն առաջարկի:	
14.	Կառավարություն	8. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող 2-րդ հոդվածի 2-րդ մաս և 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսված անցումային դրույթները խմբագրել և շարադրել, որպես նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասով լրացվող՝ Օրենքի 9-րդ հոդվածի 13-րդ մաս՝ վերահամարակալելով Օրենքի 9-րդ հոդվածում լրացվող մասերը: Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասով լրացվող՝ Օրենքի 9-րդ հոդվածի 13-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «13. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին, 8-12-րդ մասերում նշված պաշտոններ զբաղեցրած անձանց՝ մինչև 2022 թվականի մայիսի 1-ը նշանակված կենսաթոշակները համարվում են սույն օրենքով նշանակված կենսաթոշակներ և հաշվարկվում են սույն օրենքի 5-րդ	Ընդունվել է: Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսված անցումային դրույթները խմբագրվել և շարադրվել են որպես նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասով լրացվող՝ Օրենքի 9-րդ հոդվածի 13-րդ մաս՝ վերահամարակալելով Օրենքի 9-րդ հոդվածում լրացվող մասերը:	Ընդունվել է:

			հոդվածով սահմանված կարգով՝ հիմք ընդունելով ազատվելու (լիազորությունները դադարելու կամ դադարեցվելու) օրվա դրությամբ պաշտոնային դրույքաչափը և հավելավճարի չափը: Այս դեպքում, եթե հաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է նախկին չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով: Սույն մասի համաձայն կենսաթոշակները հաշվարկվում են՝ 1) կենսաթոշակի գործում պաշտոնից ազատվելու (լիազորությունները դադարելու կամ դադարեցվելու) օրվա դրությամբ պաշտոնային դրույքաչափի և հավելավճարի չափի մասին փաստաթղթի առկայության դեպքում՝ անկախ կենսաթոշակառուի գրավոր դիմում ներկայացնելու հանգամանքից՝ 2022 թվականի հունիսի 1-ից, 2) կենսաթոշակի գործում պաշտոնից ազատվելու (լիազորությունները դադարելու կամ դադարեցվելու) օրվա դրությամբ պաշտոնային դրույքաչափի և հավելավճարի չափի մասին փաստաթղթի բացակայության դեպքում՝ գրավոր դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը մինչև 2022 թվականի դեկտեմբերի 29-ը ներկայացնելու դեպքում՝ 2022 թվականի հունիսի 1-ից,		

			նշված ժամկետից հետո ներկայացնելու դեպքում՝ դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:»: Առաջարկը նպատակ ունի անցումային դրույթները շարադրել որպես Օրենքի դրույթներ՝ իրավակիրառ պրակտիկայում դյուրացնելու համար: Առաջարկվող խմբագրությունում ամսաթվերը նշվել են այն ենթադրությամբ, որ օրենքն ընդունվելու է 2022 թվականի ապրիլին: Հակառակ դեպքում հարկ կլինի վերանայել առաջարկվող ժամկետները:		
15.	Կառավարություն	9. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող 2-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ (լրամշակված	2-րդ հոդվածով լրացվող Օրենքի 9-րդ հոդվածի 13-րդ (լրամշակված նախագծի 14-րդ) մասում՝ 1) «Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ դատախազի» բառերը փոխարինել «Դատախազի» բառով, 2) «սույն օրենքն ուժն մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում,» բառերը փոխարինել «և չունեն սույն օրենքով կենսաթոշակ ստանալու իրավունք,» բառերով, 3) «պարտավոր են» բառերից հետո լրացնել «մինչև 2022 թվականի դեկտեմբերի 29-ը» բառերով, 4) «սույն օրենքն ուժի մեջ մտնելու» բառերը փոխարինել «ազատվելու» բառով,	Ընդունվել է: Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող՝ Օրենքի 9-րդ հոդվածի 13-րդ (լրամշակված նախագծի 14-րդ) մասում կատարվել են փոփոխություններ՝ համաձայն առաջարկի:	Ընդունվել է:

		նախագծի 14-րդ)	5) վերջին նախադասությունում «Օրենքով» բառերը փոխարինել «սույն օրենքի» բառերով:		
16.	Կառավարություն	10. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող 2-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ (լրամշակված նախագծի 15-րդ)	2-րդ հոդվածով լրացվող Օրենքի 9-րդ հոդվածի 14-րդ (լրամշակված նախագծի 15-րդ) մասի «Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում,» բառերը փոխարինել «Մինչև 2022 թվականի դեկտեմբերի 29-ը» բառերով, իսկ «13-րդ» թիվը փոխարինել «14-րդ» թվով:	Ընդունվել է: Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող՝ Օրենքի 9-րդ հոդվածի 14-րդ (լրամշակված նախագծի 15-րդ) մասում կատարվել են փոփոխություններ՝ համաձայն առաջարկի:	Ընդունվել է:
17.	Կառավարություն	11. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» օրենքում	2-րդ հոդվածով Օրենքի 9-րդ հոդվածը լրացնել նոր՝ 16-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝ «16. Եթե 2022 թվականի մայիսի 1-ի դրությամբ անձն ունի սույն օրենքով կենսաթոշակ ստանալու իրավունք, ապա 2022 թվականի մայիսի 1-ից հետո նրա կենսաթոշակ ստանալու իրավունքը	Ընդունվել է: Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքի 9-րդ հոդվածը լրացվել է նոր՝ 16-րդ մասով՝ համաձայն առաջարկի:	Ընդունվել է:

		փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող 2-րդ հոդվածի 2-րդ մասի 16-րդ կետ	դադարելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվում է կենսաթոշակառուի դիմումի հիման վրա՝ սույն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն:»		